ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 20.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ, 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի N 65-Ն ՀՐԱՄԱՆԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԵՎ ԷԴԳԱՐ ՇԱԹԻՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, սույն գործով քննության առնելով Սահմանադրական դատարանի դատավորներ Հրայր Թովմասյանի և Էդգար Շաթիրյանի կողմից ներկայացված՝ ՀՀ Կառավարությունից տեղեկություններ պահանջելու վերաբերյալ միջնորդությունը, **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32 և 42-րդ հոդվածների իրավակարգավորումները և նկատի ունենալով այն, որ պահանջվող տեղեկությունները կարող են նշանակություն ունենալ սույն գործի արդյունավետ քննության համար՝ «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասի, 22-րդ հոդվածի 3-րդ պարբերության և ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի N 65-Ն հրամանի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով

Սահմանադրական դատարանի դատավորներ Հրայր Թովմասյանի և Էդգար Շաթիրյանի կողմից ներկայացված միջնորդությունը բավարարել:

2. Հայաստանի Հանրապետության Կառավարությունից պահանջել հնգօրյա ժամկետում Սահմանադրական դատարանին տրամադրել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով (հրամանի առաջին կետի 1-24-րդ ենթակետերում նշված խմբավորմանը համապատասխան) նախատեսված աշխատող անձանց թվաքանակի և աշխատավարձերի չափերի վերաբերյալ տեղեկություններ՝ տրամադրվող տեղեկատվության տարանջատումն իրականացնելով ըստ աշխատավարձի հետևյալ չափերի՝ նվազագույն աշխատավարձ, 68.000–100.000 դրամ, 100.000–150.000 դրամ, 150.000–200.000 դրամ, 200.000 դրամ և ավելի:

Սահմանված ժամկետում հիշյալ տեղեկությունների ամբողջական ներկայացման անհնարինության դեպքում Սահմանադրական դատարանին տրամադրել պահանջվող տեղեկություններին հնարավորինս մոտ տեղեկություններ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

26 նոյեմբերի 2021 թվականի
ՍԴԱՈ-235